

ԳՈՒՐԳԵՆ՝ ՍԵՎԱԿ — ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱՌՈՏ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝

Հայաստանի Կ(Բ)Պ Կենտրոնական Կոմիտեն ռեալիստական պարտիական կազմակերպություններում ինքնուրույնական աշխատանքն ունեցողներին միջոցառումների մասին՝ իր պատմական և ծրագրային որոշման մեջ սովորեցնելով լեզվաբանների առաջ դրել է կարևորագույն խնդիր՝ պարզել լեզվագիտության, հատկապես սովորական ժամանակաշրջանի ակտուալ սյուրբիմներով, պրեկտորիստական և սովորական առաջավոր լեզվաբանության մեթոդաբանական մեր լեզվի պատմությունն ու տեսությունը:

Այդ պատմական որոշումից մոտավորապես մի տարի հետո լույս տեսավ ընկ. Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» և Նիկոլայի մեթոդաբանական ճիշտ գրություններից ելնելով՝ վճռում է ժամանակակից հայոց լեզվի պատմության մի շարք կարևորագույն պրոբլեմներ և համոզիչ փաստերով հերքում հեղինակաբանների մտադրված կարծիքները հայոց լեզվի ծագման ու փոփոխման մասին և հակիրճ, բայց գիտական խորությամբ շարադրում հայոց լեզվի զարգացման ընթացքը և հետևանքները:

Նա ճիշտ կերպով որակային տարբերություններ տեսնելով հայոց լեզվի տարբեր շրջանների մեջ ստանում է, որ ժամանակակից հայերենի ձևավորումը չի կարելի անհատել հայ լեզվի ձևավորումից:

Ժամանակակից հայերենի պատմությունը շարադրելուց առաջ Գ. Սևակը հենվելով իր լավագույն փաստական հարուստ նյութի վրա, տալիս է մեր ազգային պրական լեզվի պատմության մարքսիստական պերիոդիզացիան, ելակետ ունենալով ընկեր Ստալինի կողմից ազգության բրդման համար տրված 4 հիմնական հատկանիշները՝ Արդի հայերենի և հայ ազգի կազմավորման պրոցեսը միասին է սկսվել, — ստան է նա, — որովհետև ժամանակակից հայերենը հայ ժողովրդի ազգային լեզուն է և չի կարող գոյություն ունենալ այնպիսի ժամա-

նակ, որը հայ ժողովրդը որպես ազգ հանդես չէր եկել:

Հայոց լեզվի մարքսիստական պատմության ստեղծումը մեծ աշխատանքի ու շատ հարցերի պարզաբանման հետ է կապված: Այդ հարցերից է նաև ժամանակակից հայերենի պերիոդիզացիայի պրոբլեմը, որովհետև, ինչպես իրավացիորեն նշում է Սևակը, «Առհասարակ առանց պերիոդիզացիայի, մանավանդ առանց մեթոդաբանական ճիշտ պերիոդիզացիայի, պատմական դիսցիպլինը անխուսափելիորեն վերածվում է դեպքերի, երևույթների դիալեկտիկական ներքին կապակցություններն ու միջնորդավորումները չորսուորոշ չոր ժամանակագրության կամ փաստագրության» (էջ՝ 9—10):

Հայոց լեզվի պատմությունը խիստ կերպով առնչված է հայ ժողովրդի պատմության, նրա տնտեսական և քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերի հետ և հասկանալի է, որ նրա պերիոդիզացիան անխուսափելիորեն պետք է հենվի նույն այդ քաղաքական զարգացման վրա: Նիկոլայի հենց այս ճիշտ հիմունքով էլ կազմել է իր պերիոդիզացիան «Արևելահայ բնական լեզվի պատմության պերիոդիզացիան» գլուխը աշխատության ամենահաջողված և բարձրարժեք գլուխներից մեկն է, որը շատ կարևոր նշանակություն ունի հայոց լեզվի պատմության ընթացքը լուսաբանելու և լեզվական շատ խրոդություններ հասկանալու տեսակետից:

Ժամանակակից հայոց լեզվի պատմության առաջին շրջանը հեղինակն տեսնում է «Աշխարհաբարի կազմավորման, կամ վաղ աշխարհաբարի շրջան»: Սյու շրջանը, որը ընդգրկում է 17—18-րդ դարերը, ազգային ազատագրական պայքարի շրջանն է մեր իրականության մեջ: Այսպիսի մի ժամանակաշրջանում գրաբար լեզուն «մասսայական ժողովրդական շարժման հաղորդակցման հիմնական կամ միակ աղբյուր չէր կարող լինել, որովհետև նրա տարածումը սահմանափակ էր և մատչելիությունը՝ սակավ» (էջ՝ 38—39): Ահա հենց այդ շրջանում էլ սկսում է ժամանակակից հայերենի կազմավորումը: «Այդ շրջա-

1 Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Դատադատակշիռություն, Սրեան, 1948 թ.

նում նոր լեզվի հասարակական ֆունկցիաները գերազանցապես գործնական-գործարարական են: Նոր լեզուն կազմավորվում է տարերայնություն, շփոթված գիտակցական պայթյալ գրաբարի դեմ և առանց գիտակցական մշակման ու բռնի կողմնորոշման Այդ պատճառով էլ նա դեռևս անկազմակերպ է ու անմիօրինակ (էջ 52):

Այս նոր լեզվի կազմավորման համար հեղինակը նույն է երեք աղբյուր գրաբարը, միջին հայերենը, որ աշխարհաբար էին դառնում և բարբառները, որ գրականանում էր:

Հեղինակն այնուհետև բերում է լեզվական շատ հետաքրքիր և համոզիչ քաղաքական փաստեր 14 առանձին աշխատություններից, սկսած 1605 թվից մինչև 1711 թվի, որոնց մեջ նաև 1711 թվին Ամստերդամում լույս տեսած արևելահայ աշխարհաբարի առաջին քերականությունը՝ իր մի շարք նմուշներով:

Այս քաղաքական գործերի (օրագրեր, գեղարվեստական գործեր, նամակներ, պետական-պաշտոնական վավերագրեր, առօրյա խոսակցություն, քերականություն և այլն) լեզվական վիճակը հաստատում է, որ հենց այդ դարերում է սկսել ժամանակակից հայերենի կազմավորումը, և հենց այդ շրջանից էլ պետք է սկսել մեր լեզվի պատմությունը:

Մեր լեզվի պատմության երկրորդ շրջանը բնագրվում է 19-րդ դարի սկզբից մինչև 20-ական թվերը: Այդ շրջանը «Աշխարհաբարի ձևավորման կամ լուսավորական շրջանն» է: Եյս շրջանում տեղի է ունենում նշանակալից մի խոշոր երևույթ. 19-րդ դարի առաջին տարիներից վրաստանը, շուտով նաև Անդրկովկասը միակցվում են Խուսափախին և Արևելահայեր, անդառնալով Արևմտահայերից պետականորեն ու կողմնորոշմամբ՝ վերջնականապես կապում է իր բախտը «ուս ժողովրդի հետ» (էջ 55):

Այս շրջանը հեղինակի ճիշտ գնահատմամբ ինքնահանձման, ազգային պաղափուրախություն ու ազգային լեզվի գիտակցական մշակման շրջանն է: Հենց այս շրջանում էլ արևելահայ գրական լեզուն դրոշմում է գրաբարի վրա և հաղթում նրան:

Մեր լեզվի պատմության ձևավորման այս փուլը Գ. Մեվակր բաժանում է երկու ենթաշրջանի՝ նախահյուսիսափայլյան և հյուսիսափայլյան: Խոսելով հայ մեծ լուսավորիչ և Արովյանի մեր լեզվի պատմության մեջ խաղացած մեծ դերի մասին, հեղինակը Արովյանին առանձնապես բարձր է գնահատում գրապայթյալի մեջ՝ «Իր կրթի ամբողջ ուժով, — գրում է հեղինակը. — Արովյանը հարձակվում է գրաբարի վրա՝ բնդունելով այն որպես մեր

ժողովրդի զարգացումն արգելակող մեծագույն շարիքներից մեկը» (էջ 87):

Այսպիսի անգամ սիայն և Արովյանը կառուցադրված ճիշտ կերպով բնագծել ժողովրդական բարության և գրաբարի լեզվական սխառմաների էական տարրերությունը: «Արովյանը, — գրում է այնուհետև հեղինակը, — հանդիսանում է այդ նոր լեզվի՝ աշխարհաբարի առաջին պաշտպանը տեսականորեն, մասամբ և գործնականորեն» (էջ 89):

Արովյանի լեզվական հայացքները պարզելու և նրա պործունեությունը լուսաբանելու տեսակետից խոշոր արժեք ունեն այն պայմանները, որոնց մեջ աճել ու հասունացել է Արովյանը: Այդ մասին դրել հեղինակը միայն հարևանիցի գիտողություններ ունի: Մեր կարծիքով գիրքը շատ բանով պահանջ է ծնում: Եթե ավելի հանգամանորեն խոսվեր Արովյանի տեսական աշխատանքի մասին: Հայտնի է, որ այդ ժամանակ ուս գրականության ու կուլտուրայի, լեզվի ու արվեստի զարգացումը և հասարակական նոր գաղափարների սկզբնավորումը հակառակ շարժումներ գործում են փոքր ժողովուրդների մտավորականության քաղաքական հայացքները ձևավորման և գիտական պաշարի հարստացման վրա: Այդ է պատճառը, որ շնայած ցարական պետական բյուրոկրատիայի գաղութային քաղաքականությանը, անդրկովկասյան ժողովուրդների լեզուն ու կուլտուրան ավելի արագ են սկսում զարգանալ Ռուսաստանի տիրապետության տակ, քան այն ժամանակ, երբ գրանց պտնվում էին Պարսկաստանի կամ Ռուսիայի իշխանության ներքո: Ռուսական կուլտուրան ու լեզուն խիստ կերպով ներգործում են փոքր ժողովուրդների լեզուների, ուրիշ թվում և հայ ժողովրդի կուլտուրայի ու լեզվի զարգացման վրա և հատուկ ուժով ու ցայտունությամբ սթանդակում նրանց ծաղկմանը: Հայկական առաջավոր միաբն ձևավորվում է ուսական պրոգրեսիվ գաղափարների ներգործությամբ: Հայ ինտելիգենցիան սերտ կապերով կապված լինելով ուսական իրականության հետ՝ սնվում ու աճում էր ուսական կուլտուրայով: Ինչպես հայ շատ այլ մտավորականների, նույնպես և և Արովյանի ստեղծագործական ուժեղ թափը ու նպատակաույացությունը, քաղաքական հայացքներն ու լեզվական գիտելիքները ուսական առաջադեմ գաղափարների ազդեցության արդյունք են: և: Արովյանը ուս գիտականների ու գործիչների օրինակով պայթար է հայտարարում գրաբարին և նոր գրականության հիմքն է դնում: Ես իր ամբողջ գործունեությամբ նկատի է ունեցել ուսաց կուլտուրայի ու լեզվի զարգացման փորձը: Նրա քաղաքական ու լեզվական

հայացքները խարսխված են ոռոսական առաջավոր մարի և ժամանակի գիտութեան, հատկապես ոռոսական լեզվաբանութեան վրա: Իսկ ոռոսական լեզվաբանական գիտութիւնը դեռևս 16-րդ դարից ինքնուրույնաբար մշակում էր լեզվաբանական շատ պրոբլեմներ և թերականական հարցեր:

18-րդ դարից ոռոսաց լեզվի հին ու նոր ոճերի շուրջը տեսական սուր պայքար է սկսվում, որով նոր էտապ է բացվում ոռոսաց տրական լեզվի մշակման և նրա դիտական, պատմութիւնը ստեղծելու որոնումների մեջ: Այդ վիճարանութիւնների ու ընդդիմախոսութիւնների ընթացքում պարզվում են ոռոսաց լեզվի դարգացման մի շարք հարցեր: Առաջին հերթին պարզ կերպով ուրվագծվում է գրական ուսերենի, ոռոսական ժողովրդական լեզուների և հին ուլալոներենի փոխադրեցութեան ու փոխհարաբերութեան հարցերը և նշվում ուսերենի զարգացման համար անհրաժեշտ իրողութիւնների օգտագործման շափն ու ձևը:

Գաղափարական այդ վեճերին սերտորեն առնչակցվում էին նաև ոռոսաց ժողովրդական լեզուների և դրական ուսերենի փոխհարաբերութեան հարցերի մասին բորբոքված հակաճառութիւնները: Ժամանակի շատ ոռոս բանասերներ հիմնական ուշադրութիւնը դարձնում էին բարբառներին և գտնում էին, որ հին ուսերենի բառապաշարի պատմութիւնը ստեղծելու բանալին ժողովրդական լեզվի մեջ է, որովհետև նա իր մեջ պահում է այնպիսի բառեր ու դարձվածքներ, որոնք հնուց ի վեր գոյութիւն են ունեցել և շատագործվել են ոռոսաց դրական լեզվում: Սյդ ելակետն ունենալով՝ նրանք ուսումնասիրում էին ուսերենի բարբառներն ու ժողովրդական լեզվի ոճը, ինչպես նաև ուլարինական և այլ ուլալոն ժողովուրդների լեզուները, որոնք մեծ նյութ են մատակարարել հետագայի ավելի ծավալուն աշխատութիւնների հեղինակներին:

19-րդ դարի առաջին քառորդի ընթացքում ոչ միայն մեծ աշխատանք է տարվում ոռոսաց դրական լեզվի ուսումնասիրութեան ուղղութեամբ, այլև ոռոսաց ազգային լեզվի գիտական ուսումնասիրութեան ու նրա պատմութեան ստեղծման հիմք է դրվում: Տասնիններորդ դարի 40—50-ական թվականներին ոռոսական լեզվաբանութիւնը անհրաժեշտաբար դնում է ոռոսաց լեզվի ինքնուրույն, եվրոպական պատճենավորումներից ազատ թերականութեան ստեղծման հարցը: Ռուս լեզվաբանները գրտնում էին, որ ուսերենի թերականութեան մեջ ինքնուրույնաբար և յրիվ շափով պետք է իմաստավորվեն ու նկարագրվեն ոռոսաց լեզվի

ազգային յուրահատկութիւնները և իրականութիւնները:

Այսպիսով, ոռոսաց լեզվի զանազան իրողութիւնների պարզաբանմանը և նրա պատմութեանը նվիրված ուլալոնագիտական աշխատութիւնների պրոգրեսիվ մասը աչքի է ընկել իր խորը փիլիսոփայութեամբ և ոռոսաց գրական լեզվի թերականութեան կառուցվածքի ազգային առանձնահատկութիւնները քացահայտելու և յուսաբանելու ձգտումով: Ռուս շատ լեզվաբաններ ուսերենի բոլոր իրողութիւնները քննել են՝ հետևողականորեն ընդգծելով լեզվի և մտածողութեան փոխհարաբերութեան հարցերը ու շեշտելով լեզվական փաստերի և սոցիալ-փիլիսոփայական աշխարհայեցողութեան միջև եղած կապի վրա: Ռուս առաջադեմ բանասերների գործերին հանգամանորեն ծանոթանում է Արովյանը ինչպես ուսուցման, նույնպես և նրանց հետ ունեցած հանդիպումների ընթացքում: Նա Ռուսաստանում անցկացրած տարիներին դաստիարակվում է ոռոսական առաջավոր կուլտուրայով և որդեգրում պրոգրեսիվ տեսակետները: Եվ այդ բոլորի շնորհիվ Հայաստան է վերադառնում աշխատանքի մի ամբողջական ճրագիր պատրաստի ունենալով իր մտքում:

Չենք կարող շնչել, որ հայոց լեզվի իրողութիւնները ճիշտ մեկնաբանելու տեսակետից նա իրեն նախորդող շրջանում հավասար ուժ չի ունեցել: Նա ճիշտ բնութենելով հայ ազգային կուլտուրայի ու լեզվի անխուսափելի անհրաժեշտութիւնը՝ պիտակցական պայքար է սկսում այդ նոր լեզվի զարգացման համար և իր ստեղծագործութիւններում կիրառում է այնպիսի լեզու, որը թեև լրիվ գրական չէր, բայց չէր նույնանում ոչ մի բարբառի հետ:

Արովյանի լեզվի «արատը» միայն նրա բարբառային տարրերի առատութիւնն է, իսկ այն էլ, Գ. Սեվակի հաշվումով, կազմում է իր լեզվի միայն 16 տոկոսը, և միայն 8 միավորով է ավելի Բուժանյանի լեզվում եղած բարբառային տարրերից: Սակայն այստեղ շատ թիշ նշանակութիւն ունեն լեզվական այդ բաղադրիչները, որովհետև ազգային այն լեզուներն են ավելի հարագաս ժողովրդին և ավելի հասկանալի իրենց բոլոր տարրերով, որոնք ավելի ժողովրդական են, իսկ լեզվին ժողովրդականութիւն տվողը, ինչպես ճիշտ կերպով նշում է Գ. Սեվակը, ոչ թե բառերը կամ թերականական ձևերն են, այլ «ժողովրդային լեզվամտածողութիւնը, պարզ, ոչ շինծու լեզուն, որ տրվում է հարագատ ժողովրդի կենդանի խոսքի ուշադիր գիտումով և հմուտ օգտագործմամբ» (էջ 124): Այդ տեսակետից է. Արովյանը կարող է

համեմատվել նույնիսկ հետագա շրջանի մեր շատ գրողների հետ:

Արո՛վյանի նպատակն էր՝ ժողովրդին հաճելի և սրաւ գրավ գրականության սկիզբ գնել, «սրտի բան» գրել, սեփական ազգի քաջագործները պատկերել և աշխարհաբար լեզվի պատիվը վերականգնել ու գեղարվեստական գոհականության լեզուն դարձնել: Այդ բոլորը նա կատարում է մեծ ջանասիրությամբ: Նա քրեականներում, ռեպրտաժներում է յուր կազմավորման պրոցեսի մեջ գտնվող հայ ազգային լեզուն, նրան կյանք մտնելու իրավունք տալիս և պայքարում նրա մշակման ու լայն տարածման համար:

Երբ լեզինակը մանրամասնորեն ներկայացնելով 1840—50-ական թվականներին ծավալված գրապայքարի պրոցեսը և դրան համընթաց տալով Ս. Նազարյանի և Ս. Նալբանդյանի աշխատանքը՝ իրավացիորեն նկատում է այն խիստ տարբերությունները, որոնք շատ բացորոշ կերպով հանգես էին գալիս Նազարյանի և Նալբանդյանի աշխարհայացքների և հատկապես լեզվական հարցերի նկատմամբ նրանց կարծիքների մեջ:

«Նազարյանը և Նալբանդյանը, — նշում է հեղինակը. — լեզուն և պայքարը լեզվի համար օգտագործում էին միանգամայն հակադիր դասակարգային շահերի համար» (էջ՝ 99):

Միևույն ժամանակ նաև լեզվական հարցերում ունեցել է ճիշտ և դեմոկրատական հայացք, սակայն մինչև այսօր ոչ մեկը նույնիսկ փորձ չի կատարել մանրամասնորեն ուսումնասիրության ենթարկելու նրա լեզվագիտական-տեսական հայացքները, նրա լեզվաշինարարական պրակտիկ գործունեությունը, նրա լեզվի զարգացումն ու առանձնահատկությունները: Մինչև այսօր անհրաժեշտ չափով չի պարզված նրա դերն ու նշանակությունը մեր լեզվի զարգացման պատմության մեջ: Այս տեսակետից տեսա, աշխատության մեջ Ս. Նալբանդյանի լեզվագիտական հայացքների շուրջը՝ հատվածը հանդիսանում է մեծ դեմոկրատի լեզվական տեսական ու գործնական հարցերի առաջին համառոտ, բայց միանգամայն հարողված պարզաբանման փորձը: Հեղինակը հիմնավոր կերպով ապացուցում է, որ Նալբանդյանի լեզվաշինարարական պրակտիկ գործունեությունը միշտ էլ զուգակցված է եղել նրա լեզվագիտական տեսական հայացքների դեմոկրատականությանը: Լեզուն դիտելով ոչ միայն հաղորդակցման միջոց, այլև իրեն մտածողության միջոց, մտածողության ձև, Նալբանդյանը զգում էր և պահանջում էր, որ նոր լեզուն (աշխարհաբար, լեզ.) ժողովրդական լինի իր բնույթով, մտածողությամբ:

ձևերով, իսկ աշխարհայացքով, և համաձայնությամբ (ընդգծումը հեղինակինն է. — Հ.Կ.) (էջ՝ 109):

Համոզվել և հիմնավոր են ներկայացված Նալբանդյանի մատերիալիստական բնորոշումը լեզվական հարցերում, նրա տեսակետը գրաբարի և սոցիալահարարի սխտեմների մասին, աշխարհաբարի մշակման ու զարգացման համար նրա մղած պայքարի բնույթն ու նպատակները, նրա լեզվի ժողովրդայնությունը և բարբառների գնահատման ու օգտագործման հարցը և այլն:

Կարելի է որոշակի ասել, որ Ս. Նալբանդյանը առաջ է քաշել ուղղություն դեմոկրատականության տեսական ու գործնական լեզվական բնույթի այն հիմնական հարցերն ու խնդիրները, որոնք հետագայում պետք է մանրակրկիտ ու լուրջ ուսումնասիրության ենթարկվեն հայ բանասերների և լեզվաբանների կողմից:

Մեր աշխարհաբար դրական լեզվի պատմության երրորդ շրջանը ընդգրկում է 19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 1920 թիվը, այսինքն՝ Հայաստանում սովետական կառավարի հաստատումը: Հեղինակն այդ փուլը անվանում է «Աշխարհաբարի ժողովրդականացման կամ դասական աշխարհաբարի շրջան»: Այս շրջանում զարգանում է արդյունաբերական կապիտալիզմի և դեմոկրատական կապես Թիֆլիսում և Բաքվում, ծավալվում են ներազգային դասակարգային ուժերի բախումները, ստեղծվում են կազմակերպված պարտիաներ և պարտիական մամուլ՝ իրենց հակադիր հայացքներով ու նպատակներով: Լեզուն այս շրջանում համեմատաբար միօրինակ է, բայց բազմաբանգ ըստ ժանրերի, ընդարձակվում են նրա ֆունկցիաները՝ ավելանալով նոր ֆունկցիաներ:

Հեղինակն այս շրջանն իր հերթին բաժանել է երկու ենթաշրջանի՝ հետհյուսիսափայլյալն և նախասովետական:

Այստեղ նա քննության է առել կարևոր մեկ ուրիշ հարց՝ Խումանյանի լեզվի խնդիրը: Նա լեզվական նուրբ դիտողություններով այստեղ ներկայացրել է մեծ բանաստեղծի լեզվական առանձնահատկությունները և պարզաբանել ժողովրդայնության հարցը լեզվի մեջ, պարզելով նաև, թե որտեղից է եկել, ինչ բազադրիչներից կազմվել ու ինչ տեղ ունի Հովհ. Խումանյանի լեզուն մեր գրական ու գրականության լեզվի պատմության մեջ:

Հեղինակն առաջինը մեր լեզվի պատմության մեջ մեթոդական ու մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից հետազոտում և պարզաբանում է Խումանյանի լեզվի ժողովրդայնության

հարցը, պարզում են լոռեցու լեզվական զգաղունիքը, Թումանյանական լեզվի հատկանիշները, եզրակացնելով, որ որևէ հեղինակի լեզվին թողոքալիցականություն տվողը բառերը չեն, այլ հարազատ, ժողովրդային լեզվամտա-ժողովրդներ, պարզ, ոչ շինծու լեզուն, որ տրվում է հարազատ ժողովրդի կենդանի խոսքի ուղղորդող դիտումով և հմուտ օգտագործմամբ» (էջ՝ 129)։

Երրորդ շրջանի ուսումնասիրությունը Սեվակը ամբողջացնում է «Գրական աշխարհագրության համակարգը» ենթագլխով, որի մեջ տրվում է մեր լեզվի սիստեմը, նրա բարբառային և գրաբարյան բոլոր տարրերով։

Այստեղ հեղինակը հիմնավոր կերպով նկարագրում է հայոց լեզվի համակարգը՝ հաստատելով, որ «նա (= ժամանակակից հայոց լեզուն — Հեղ.) ոչ գրաբար է, ոչ բարբառ, այլ գրաբարի ու բարբառների պատմական հիմքի վրա կանգնած մի համադրական (սինթետիկ) լեզուն» (էջ՝ 146)։

Հաջորդ և վերջին շրջանը մեր լեզվի զարգացման սովետական փուլն է, որը հեղինակը անվանել է «Սովետական կամ համազգային լեզվի շրջան» (ընդգրկում է 1920 թվից ի վեր)։

Այս շրջանը հայտնի է պրոլետարիատի առաջատարությունը և նրա իշխող իդեոլոգիայով, լեզվի տերիտորիական տեղայնացումով Հայկական ՍՍՌ-ում և պետական կարգավորմամբ առաջին անգամ հայոց լեզուն դառնում է պետական լեզու և ձեռք բերում նոր ֆունկցիաներ (գետական-վարչական, դատարանական, բուհական, պետական-փիլիսոփայական, տեխնիկական, գյուղատնտեսական, արդյունաբերական և այլն), նա ենթարկվում է պետական կարգավորման, մշակման ու կոնսոլիդացիայի։ Վերանում է բարբառների հակադրությունը և նրանք առտիճանաբար տեղի են տալիս գրական-ժողովրդական միասնական լեզվի առաջ։ լեզուն դառնում է համատարած ժողովրդական, գյուղի ու քաղաքի աշխատավորների արտա-դրության, աշխատանքի և պայքարի հիմնական լեզու։ Հիմնովին վերանորոգվում են լեզվի իմաստաբանությունը, բառապաշարը և ուղղագրությունը։ նկատվում է ոռոսաց լեզվի առավել ուժեղ ազդեցությունը։ լեզուն միառժամանակ ետ է մնում գաղափարապես բարձր և հարուստ բովանդակությունից, բայց հետո բարձրանում է և մոտենում արագաթափ առաջ գնացող բովանդակությանն ու ընդհանրապես սովետական բարձր կուլտուրային» (էջ՝ 149)։

Մեր լեզվի զարգացման սովետական փուլի լուրջ և մանրակրկիտ ուսումնասիրությունն անհերքելի կերպով մինչև այժմ մնացել է մեր

գիտնականների տեսադաշտից դուրս։ Մինչև օրս մենք չունենք մեր լեզվի զարգացման սովետական շրջանի ամբողջական և մանրամասն ուսումնասիրությունը։ ավելին՝ չունենք նույնիսկ այդ շրջանի լեզվական առանձին հարցերի մանրակրկիտ և ամբողջական հետազոտությունը։ Հասկանալի է, թե ինչու միանգամայն իրավացի կերպով ընկ. Ե. Սևակը իր այս ուսումնասիրության մեջ համեմատաբար մեծ տեղ է հատկացրել այդ շրջանին։ Աշխատության «Սովետական կամ համազգային լեզվի շրջան» գլուխը սովետահայ լեզվի առաջին լուրջ ուսումնասիրությունն է մեր իրականությունում։ Այստեղ հեղինակը գիտական և պարզ լեզվով ներկայացրել է մեր գրական լեզվի գոյության վերջին 28 տարվա նկարագիրը, նրա ձևեր բերած խոշորագույն նվաճումները, որոնք չափազանց շատ են և արմատական։

Հեղինակն այս գլխի առաջին մասում նախ համառոտակի ներկայացրել է մեր ազգային-հրական լեզվի ոչ բարեհաջող վիճակն ու նրա կատարած հասարակական սահմանափակ ֆունկցիան՝ ցարիզմի տիրապետության շրջանում։ Հեղինակն այնուհետև հանգամանորեն ներկայացրել է Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ուղուցիայի մեծ և փրկարար դերը հայ ժողովրդի, նրա կուլտուրայի ու լեզվի բարգավաճման գործում։

Հեղինակը այնուհետև մանրամասնորեն ներկայացրել է չափազանց նշանակալից տեղաշարժերը մեր լեզվի բառապաշարի, ուղղագրության, ուղղախոսության, բառակազմության, իմաստաբանության մեջ և ակնարկել նվաճումները ձևաբանության, շարահյուսության և ոճաբանության մեջ։

Մոտ մեկ երեսնամյակում հայոց լեզուն աճել ու զարգացել է ինչպես հասարակական դերով ու գործունեությամբ, այնպես էլ իր որակով։ Սոցիալիզմի հաղթանակի պայմաններում մեր լեզվի մեջ պատմա-անհրաժեշտորեն առաջ եկած բոլոր և յազմատեսակ տեղաշարժերից քննության համար հեղինակը վերցրել է 6 հարց. ա) մեր լեզվի բառապաշարի մեջ կատարված տեղաշարժերը, բ) նորագույն հաղա-վումները հայերենում, գ) «Սովետական Հայաստան» թերթի լեզուն, դ) հայոց լեզվի ուղղախոսությունը, ե) բառազանձը և զ) բառակազմությունը։

Հեղինակը մանրամասնորեն է տվել մեր լեզվի բառապաշարի բնագավառում տեղի առնեցած տեղաշարժերը վերջին 28 տարվա ընթացքում, որոնք արդյունք են նոր հասարակարգի՝ սոցիալիստական հասարակարգի, նրա կուլտուրայի։ Այստեղ էլ հենց նա հանգամանորեն կանգ է առել ոռոս առաջավոր լեզվի

բարեբար ազդեցության խնդրի վրա: «Դժվար է պատկերացնել հայոց գիտական լեզվի դարգացումը առանց ուսեերենի օգնության», — միանգամայն էիլտ եզրակացրել է հեղինակը:

Սեվակը մեր լեզվի բառապաշարի ճշգրտման, հարստացման և բառափոխություններն օրինականացնելու գործում իրավացիորեն մեծ գեր է հատկացրել Տերմինաբանական կոմիտեի ընդունած և օրենքի ուժ ստացած որոշումներին:

Իբրեւ սովետական շրջանի հայերենի և նրա նվաճումների բնութագրման օրինակ նա քննության է առել «Սովետական Հայաստան» թերթի լեզուն. դրանով իսկ վեր հանելով սովետական պարտիական հայ մամուլի լեզվական բոլոր առանձնահատկություններն ու ձեռք բերած նվաճումները: Ծվ իսկապես, մեր ամբողջ մամուլի նման «Սովետական Հայաստան» թերթը հսկայական գործ է կատարել մեր լեզվի ժողովրդականացման, բառապաշարի ճշգրտման, հարստացման, տերմինաշինարարության, ուղղագրության և բազմաթիվ ուրիշ ասպարեզներում:

Հայոց լեզվի ուղղախոսության մասին խոսելով, հեղինակը ինչքան անվիճելի է համարում մեծ միասնական գրական ուղղախոսության գոյությունը թատրոններում, բուհերում, դպրոցներում, քաղաքներում, գյուղերում և բնտանիքներում, նույնքան էլ պարտադիր է համարում նրա մեջ որոշ կարգավորում մտցնելը, հատուկ հսկողությունը նրա նկատմամբ, ուղղախոսության մեջ եղած արատների վերացումը, իսկ իբրեւ ուղղախոսական ամենատիպական արատներ ընկ. Սեվակը հիշում է բարբառային արտասանությունը, սխալ շեշտադրությունը, գրային կամ գրքային հնչումը, անտեղի և օտար լեզուների ազդեցությամբ բառակազմած արտասանությունը, և այլն, որոնք այս կամ այն չափով նկատվում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր լեզվի մեջ: Այս հարցի կապակցությամբ նա միաժամանակ քննության է ենթարկել մեր թատրոնի լեզուն, ընդգծել նրա ձեռք բերած լեզվական նվաճումները և նշել նրա լեզվի մեջ եղած թերությունները:

«Հայոց լեզվի բառադանձր» գլխի մեջ հեղինակը՝ ղեկավարվելով սովետական մեծ գիտնական Ն. Մառի ուսմունքով, առաջին անգամ նշել է մեր լեզվի բառամթերքի հարստության ակունքները, դասակարգել արդի հայերենի բառապաշարը՝ բաժանելով 5 տարբեր շերտերի, որոշել է յուրաքանչյուր շերտի առաջացումը և լեզվաբանական արժեքը, վերլուծել յուրաքանչյուր շերտը և գիտականորեն

հիմնավորել մեր բառադանձի զարգացման և ընդարձակման սովետական փուլը:

Հեղինակը մեր լեզվի սովետական փուլի ուսումնասիրությունը վերացրել է «Հայոց լեզվի բառակազմությամբ», որի մեջ մանրամասնորեն քննության է առել նոր բառեր կազմելու կամ ստեղծելու սկզբունքներն ու ձևերը, բառակազմության տեսնիկան ու նրա զարգացման փուլերը, բարդ բառերի տեսակները հանդիմանում և այլն:

Հեղինակը միանգամայն համոզիչ կերպով ապացուցել է, որ այժմ մեր լեզվի մեջ (և ոչ միայն մեր լեզվի մեջ) անկարելի է կազմել պարզ կամ արմատական որևէ բառ, մինչդեռ, դրան հակառակ հնարավոր է և կազմվում են բաղադրյալ բազմաթիվ բառեր. «Մեզանից ոչ ոք չի կարող այսօր ստեղծել քար, տուն, ձի, սեղան, պայտ, հրապարակ, երիտասարդ և այլ պար բառերի նման որևէ բառ, մինչդեռ մեզանից յուրաքանչյուր կարող է ծանոթ արևատներով ու առանցներով ուզած բոլոր ստեղծել անսահման բանակությամբ ածանցավոր, բարդ կամ բարդ ածանցավոր բառեր» (էջ՝ 239—240):

Հենց այստեղ էլ Գ. Սեվակը քննարկել է հայերենում մի քանի առարկաների նախագաղափարն արտահայտող բառեր, սրանց միջոցով պատմական մատերիալիզմի ու լեզվի նոր ուսմունքի դրույթներից ելնելով՝ ժամանակակից հայոց լեզվի մեջ հայտարարել է մեր լեզվի ամենահին շրջանները և աշխատանքային ամենապրիմիտիվ պրոցեսների արտահայտության մեջ նրանց մեջ և համառոտակի նշել հայերեն բառակազմության տեսնիկայի աստիճանական զարգացումը՝ սահմանելով նրա հաջորդական փուլերը, ապա՝ բացատրել այդ փուլերից յուրաքանչյուրը՝ գլխավորապես հանդերձ, երբեմն էլ այլ լեզուներից վերցրած պարզ ու բարդ շերտերով:

Ինչպես տեսնում ենք, բազմաթիվ են այս աշխատության արժանիքները:

Այս ուսումնասիրությունը նախ և առաջ ուղղված է հնդեվրոպաբանության դեմ: Հեղինակը փաստերով հերքել է հնդեվրոպաբանների կարծիքները մեր լեզվի ծագման, փոփոխման ու զարգացման մասին:

Հեղինակը կարողացել է ոչ միայն տեսնել արդի հայերենի ու նրա պատմության հիմնական պրոցեսները, այլև յուրաքանչյուրին տալ գիտականորեն հիմնավորված և համոզիչ բացատրություն:

Ելնելով Մառի՝ լեզվի նոր ուսմունքի սովետական առաջավոր լեզվաբանության պահանջներից, Գ. Սեվակը առաջին անգամ համո-

գիշ և ժանրակցի ու փաստերով լուծել է հայ լեզվաբանության մեջ հրկար ժամանակ վիճելի շարժած տեսական-սկզբունքային մի շարք հարցեր, ինչպիսիք են մեր լեզվի կազմավորման, նրա աղբյուրների, գրաբարի, միջին հայերենի, արևելահայ և արևմտահայ դրական չեզոքների դերի ու նշանակության, հայ հեղինակներ Աբովյանի, Նազարյանի, Նալբանդյանի և Թումանյանի լեզվաշինարարական դերի, լեզվի ժողովրդայնության և այլ հարցեր:

Աշխատության ամենամեծ արժանիքներից մեկը մեր լեզվի սլաոմության սովետական շրջանի՝ իբրև մեր լեզվի վերելքի ու բարգավաճման, համալրային, պետական, համաժողովրդական ու միասնական դառնալու շրջանի, ուսումնասիրության մեջն է:

Այսպիսով, Բ. Սեվակի այս գիրքը յուրահատուկ մի ամփոփումն է այն երկարատև ու արդյունավետ պայքարի, որ տարել են սովետահայ լեզվաբանները, ժամանակակից հայերենի տեսական և գիտական հարցերի պարզաբանման ընդգլխում եղած հին ոնակցիոն տեսությունների ու նրանց ոնցիդիվների դեմ մեզանում: Այս գիրքը նաև հայերենի տեսության ասպարհում կատարված աշխատանքի ամփոփումն է, ժամանակակից հայերենի ավելի ընդարձակ պատմության հիմնաքարը:

Սեր կարծիքով, սակայն, աշխատությունն ավելի կատարյալ կլիներ, եթե զերծ լիներ ևկատվող մի բանի թերություններից, որոնց մեջ առանձնապես աչքի է ընկնում շարադրման համոռոտությունը: Շուրջ չորս դար ընդգրկող մեր լեզվի պատմությունը ներկայացված է ընդամենը 360 էջի վրա: Հասկանալի է, որ այս ծավալի ուսումնասիրությունը չի կարող ամբողջական լինել:

Հենց այդ համառոտության հետևանքով է, որ ոչ միայն անհրաժեշտ չափով չի ընդարձակվել ընդգրկված հարցերի մի զգալի մասի հետազոտությունը, այլև՝ ուսումնասիրությունից դուրս են մնացել կարևոր մի շարք խնդիրներ: Ընկալելով անհրաժեշտ չափով չի ընդարձակված մեր լեզվի սովետահայ շրջանում ձեռք բերած նոր ֆունկցիաների պարզաբանումը: Խոսելով հնաբանությունների (արխայիզմների) և նորաբանությունների (նեոլոգիզմների) մասին և հիշելով, որ անորարանություններով առանձնապես հարուստ է մեր լեզվի զարգացման սովետական փուլը» (էջ՝ 239), հեղինակն այնուհետև հանդամանորին կանգ չի առնում նորա-

րանությունների վրա, որոնք մեր լեզվի մեջ ունեն տեսական և գործնական կարևորություն: Ամբողջական է Աբովյանի լեզվական հայացքների լուսաբանությունը, չի ցուցադրված մեր լեզվի սովետական շրջանում ձեռք բերած որակական անբ, չեն տրված հայերենի ուղղագրության, ոճարանության, ձևաբանության և շարահյուսության մեջ կատարված չափազանց նշանակալից տեղաշարժերի մանրամասնությունները և այլն:

Մեր կարծիքով շատ է բարձր գնահատված աշխատությունական շրջանի մեր լեզուն: Հեղինակը գրում է՝ այդ շրջանում մեր լեզվի ձևը և կոլտուրան հասնում են կատարելագործության» (էջ՝ 120), մինչդեռ հայտնի է, որ հենց այդ շրջանի գեղարվեստական գրականության, մամուլի և հրապարակախոսության լեզուն անհերքելի թերություններ ունեն հասկանալի է, որ այդ շրջանի լեզուն չէր կարող լինել կատարյալ:

Ժիտ չի գնահատված մեր ուղիղ ուղղախոսությունը՝ անվանելով այն «օրիորդական», կամ «հրուշակային», որ սողոցում է աճեն օր և ամբողջ օրը: Ուղիղ լսողների ականջը նույնիսկ նրանում» (էջ՝ 197): Կասկածից վեր է, որ մեր ուղիղ ուղղախոսություն մեջ դեռևս կան որոշ թերություններ, սակայն նույնքան էլ անհերքելի է, որ ուղիղ իր ուղղախոսությունը բավականաչափ կարգավորել է, կանոնավորել է միօրինակացրել:

Աշխատությունը զերծ չէ նաև վրիպակներից: Օրինակ՝ դրված է «լեզվաշինություն» (էջ 55), «հնուց» (200), «թերը» (էջ 183), պետք է լինի՝ լեզվաշինություն, հնից, թերթը: մի տեղ գրված է «բարդ ածանցավոր» (էջ 239), իսկ մի ուրիշ տեղ՝ «բարդածանցավոր» (240) և այլն:

Այս թերությունները, սակայն, չեն կարող որևէ չափով նվազեցնել աշխատության դիտական նշանակալից արժեքն ու անժխտելի կարևորությունը:

Միայն սլետք է ցանկանք, որ հեղինակն ընդարձակի իր այս աշխատությունը, հարստացնի նոր դուխներով, ավելի ծավալի ընդգրկած հարցերի հետազոտությունը և ավելի կատարյալ ու ամբողջական դարձնի մեր ախարհարար լեզվի պատմությունը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ս. ՂԱԳԱՐՅԱՆ